ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերում փոփոխություն կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի փետրվարի 06-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «**ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ**-23/03»

Դատական դեպարտամենտի կարիքների համար A4 ֆորմատի թղթի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառը և կատարված փոփոխության համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ eauction.armeps.am համակարգի առանձնահատկություններով պայմանավորված վերոնշյալ համակարգի միջոցով ձևավորվող հրավերի տեքստում հնարավոր չէ նշել բանկային երաշխիքների ձևով հայտի, որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվելու դեպքում հիշյալ երաշխիքներում ներառվող՝ կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված համապատասխան գանձապետական հաշիվները, անհրաժեշտություն է առաջացել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/03» ծածկագրով ընթացակարգի հրավերում կատարել փոփոխություն՝ կցելով ծանուցում: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերում կատարվել է փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն՝ կցվել է ծանուցում հետևյալ բովանդակությամբ.

«- հայտի ապահովմանը վերաբերող բանկային երաշխիքում (Հավելված 2) բենեֆիցիարի հաշվեհամարը անհրաժեշտ է նշել «900008000466»,

- որակավորման ապահովմանը վերաբերող բանկային երաշխիքում (Հավելված 3) բենեֆիցիարի հաշվեհամարը անհրաժեշտ է նշել «900008000664»,

- պայմանագրի ապահովմանը վերաբերող բանկային երաշխիքում (Հավելված 4) բենեֆիցիարի հաշվեհամարը անհրաժեշտ է նշել «900008000664»:

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվում ընթացակարգի փոփոխված հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 16-րդ օրվա ժամը 12:00-ն: Այս դեպքում մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման վավերականության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում»:

Փոփոխության հիմնավորում՝ փոփոխությունը կատարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/03» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աիդա Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ 010 511-574:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: